

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 24-ՀՄԱԱՇԶԲ-21/6-Ա**

ք. Երևան

«26» *հունիս* 2021թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ս. Ալոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 536-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 33+500 կմ 42+600 (Արարատ բնակավայր) ճանապարհահատվածի վրա գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծային փաստաթղթերի 150 օր:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են (նախագծային փաստաթղթերում) պայմանագրի N 3.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 137 754 400 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 22 959 000 (քսաներկու միլիոն ինը հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 68 877 200 (վաթսունութ միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմանը և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային կոմիտե

ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա

Հ/Հ 900011036184

ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող



Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊԸ

ք. Երևան, Վ. Սարգսյան 10.2/4,

Գործ. հասցե՝ ք. Երևան, Շիրակի 47/3

հեռ. 010 46-52-22

բանկ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 2500010413760100

ՀՎՀՀ 01529053

Էլ. հասցե info@beelder.am

Գործադիր տնօրեն



Ա. ՄԱՐԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

**ՀՑ, ԵՐԱՆ-ԱՐՏԱՇԱՏ-ԱՅԳԵՎԱՆ ԿՄ 33+500 ԿՄ 42+600 (ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ)
ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
Կցվում է**

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը, հազ.դրամ	
				միավ.	ընդհամ.
1	2	3	4	5	6
	ԲԱԺԻՆ I Գ.ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ				
	1.1 Ջրագիծ-1 (W ₁) և միացումներ գոյություն ունեցող ջրագծերի հետ ԳՄ ₁ -ԳՄ ₁₃ և նախագծվող ջրագծերի հետ W ₃ -W ₆ , W ₈ -W ₁₅ , W ₁₇ -W ₁₉ , W ₂₁ -W ₂₃				83,626.84
	Հողային աշխատանքներ				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում	մ	386.0	0.37	142.82
2	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով, (214.0մ²x0.3)	100մ³	0.0642	327.40	21.02
3	Խրամուղու և փոստրակի մշակում IV կարգի գրունտներում, քանդված ասֆալտբետոնի բարձում ա/մ	1000մ³	0.032	664.80	21.27
4	Բարձած ասֆալտբետոնի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	64.0	0.88	56.32
5	Խրամուղու և փոստրակների մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ	1000մ³	0.002	664.80	1.33
6	Բարձած բետոնի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	4.0	0.88	3.52
7	Խրամուղու մշակում VI կարգի գրունտներում (բետոնե ծածկույթ 72.0մ², b=0.15մ)	100մ³	0.105	1,811.40	190.20
8	Բետոնե ծածկույթի բարձում ա/մ ձեռքով	տն	18.90	0.27	5.10
9	Բարձած բետոնի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	18.90	0.88	16.63
10	Տեղափոխված բետոնի ծածկում գրունտով	100մ³	0.105	102.57	10.77
11	Խրամուղու և փոստրակների մշակում III կարգի գրունտներում, բարձելով ա/մ	1000մ³	1.9655	492.96	968.91
12	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	3,832.73	0.88	3,372.80

13	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով	100մ³	0.11	200.76	22.08
14	Գրունտի բարձում ա/մ ձեռքով	տն	21.45	0.27	5.79
15	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	21.45	0.88	18.88
16	Խրամուղու և փոսորակների մշակում II կարգի գրունտներում, բարձելով ա/մ	1000մ³	1.2645	383.66	485.14
17	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 3,0կմ հեռավորությամբ	տն	2,465.78	0.88	2,169.88
18	Տեղափոխված գրունտի հարթեցում տեղափոխման վայրում, 3275.0մ³	100մ²	327.50	1.01	330.78
19	Խրամուղու և փոսորակների մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ³	0.0785	404.34	31.74
20	Խրամուղու և փոսորակների մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ³	0.7885	323.91	255.40
21	Խրամուղու և փոսորակների լրամշակում ձեռքով, հատակի հարթեցմամբ	100մ³	1.225	424.89	520.49
22	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ³	224.50	3.77	846.37
23	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով h=10սմ հաստությամբ	մ³	1.0	3.77	3.77
24	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում	մ³	185.0	3.77	697.45
25	Խրամուղու և փոսորակների ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	1000մ³	0.867	56.33	48.84
26	Ետլիցքի պնևմո տոփանում	100մ³	8.67	22.97	199.15
27	Խրամուղու և փոսորակների ետլիցք ավազով	1000մ³	2.4325	2201.14	5,354.27
28	Ետլիցքի պնևմո տոփանում	100մ³	24.325	22.97	558.75
29	Խրամուղու ետլիցք ավազով ձեռքով՝ տոփանումով	100մ³	0.095	317.05	30.12
30	Ետլիցքի պնևմո տոփանում	100մ³	0.095	22.97	2.18
31	Փոսորակից գրունտային ջրերի հեռացում	100մ³	0.15	141.72	21.26
32	Խճի շերտի իրականացում h=12սմ հաստությամբ	100մ²	0.06	107.13	6.43
33	Խճի շերտի տոգորում բիտումով	տն	0.025	145.77	3.64
34	Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=12սմ հաստությամբ	100մ²	1.60	107.13	171.41
35	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում h=6սմ հաստությամբ	100մ²	1.60	338.51	541.62
36	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում h=4սմ հաստությամբ	100մ²	1.60	373.98	598.37
Տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Գոյություն ունեցող պողպատե (St) Ø400 խողովակի վրա 250մմ տրամագծի անցքի բացում	տեղ	1	4.23	4.23
2	Բացված 250մմ տրամագծի անցքի շուրթի հարթեցում	տեղ	1	4.23	4.23
3	Ø400xDN250 պողպատե խողովակների եռակցում	տեղ	1	4.23	4.23

4	Գոյություն ունեցող պողպատե (St) Ø80 խողովակների կտրում	տեղ	2	1.44	2.88
5	Գոյություն ունեցող պողպատե (St) Ø50 խողովակների կտրում	տեղ	7	1.00	7.00
6	Գոյություն ունեցող պոլիէթիլենե (HDPE) Ø160 խողովակների կտրում, 2տեղ	գծմ	1.0	0.20	0.20
7	Գոյություն ունեցող պոլիէթիլենե (HDPE) Ø110 խողովակների կտրում, 2տեղ	գծմ	0.70	0.14	0.10
8	Գոյություն ունեցող պոլիէթիլենե (HDPE) Ø90 խողովակների կտրում, 5տեղ	գծմ	1.40	0.14	0.20
9	Գոյություն ունեցող պոլիէթիլենե (HDPE) Ø63 խողովակների կտրում, 4տեղ	գծմ	0.80	0.11	0.09
10	Գոյություն ունեցող պոլիէթիլենե (HDPE) Ø50 խողովակների կտրում, 4տեղ	գծմ	0.63	0.11	0.07
11	DN480x4 պողպատե (St) էլ/եռակցվող պատյան խողովակների իրականացում	գծմ	33.0	31.76	1,048.08
12	DN377x4 պողպատե (St) էլ/եռակցվող պատյան խողովակների իրականացում	գծմ	15.0	25.08	376.20
13	DN325x4 պողպատե (St) էլ/եռակցվող պատյան խողովակների իրականացում	գծմ	110.0	20.13	2,214.30
14	DN273x4 պողպատե (St) էլ/եռակցվող պատյան խողովակների իրականացում	գծմ	80.0	14.18	1,134.40
15	Պողպատե DN273x5 (St) էլ/եռակցվող խողովակների մոնտաժում	գծմ	10.0	17.84	178.40
16	Պողպատե DN50 (St) կարճախողովակի մոնտաժում (l=0.15մ), 1հատ	գծմ	0.15	1.78	0.27
17	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN250, PN=1,0 ՄՊա	գծմ	2,940.0	14.75	43,365.00
18	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN225, PN=1,0 ՄՊա	գծմ	10.0	12.12	121.20
19	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN160, PN=1,0 ՄՊա	գծմ	28.50	4.38	124.83
20	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN110, PN=1,0 ՄՊա	գծմ	49.0	2.51	122.99
21	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN90, PN=1,0 ՄՊա	գծմ	213.0	1.81	385.53
22	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN75, PN=1,0 ՄՊա	գծմ	80.0	1.41	112.80
23	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN63, PN=1,0 ՄՊա	գծմ	97.0	0.92	89.24
24	Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN50, PN=1,0 ՄՊա	գծմ	72.0	0.82	59.04

25	Էլ. մագնիսական ծախսաչափի մոնտաժում տեղային մարտկոցով և իմպուլսային էլքի հնարավորությամբ DN250 PN=1,0ՄՊա	հատ	1	1460.22	1,460.22
26	Երկաստիճան օդահեռի DN50 PN=1,0ՄՊա մոնտաժում	հատ	1	38.76	38.76
27	Սեպավոր փականների մոնտաժում DN250, PN=1,0ՄՊա	հատ	4	248.86	995.44
28	Սեպավոր փականների մոնտաժում DN200, PN=1,0ՄՊա	հատ	1	157.40	157.40
29	Սեպավոր փականների մոնտաժում DN150, PN=1,0ՄՊա	հատ	2	92.35	184.70
30	Սեպավոր փականների մոնտաժում DN100, PN=1,0ՄՊա	հատ	3	48.45	145.35
31	Սեպավոր փականների մոնտաժում DN80, PN=1,0ՄՊա	հատ	13	44.59	579.67
32	Սեպավոր փականների մոնտաժում DN65, PN=1,0ՄՊա	հատ	4	33.05	132.20
33	Սեպավոր փականների մոնտաժում DN50, PN=1,0ՄՊա	հատ	5	29.09	145.45
34	Սեպավոր փականների մոնտաժում DN40, PN=1,0ՄՊա	հատ	4	24.26	97.04
35	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN250, PN=1,0ՄՊա	հատ	5	57.12	285.60
36	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN200, PN=1,0ՄՊա	հատ	1	41.45	41.45
37	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN150, PN=1,0ՄՊա	հատ	2	31.34	62.68
38	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN100, PN=1,0ՄՊա	հատ	3	20.17	60.51
39	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN80, PN=1,0ՄՊա	հատ	13	18.33	238.29
40	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN65 PN=1,0ՄՊա	հատ	4	15.29	61.16
41	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN50, PN=1,0ՄՊա	հատ	5	13.84	69.20
42	Կցաշուրթային ձկուն ներդիրների մոնտաժում DN40, PN=1,0ՄՊա	հատ	3	12.78	38.34
43	Պողպատե էլ. եռակցվող կցաշուրթերի մոնտաժում DN40, PN=1,0ՄՊա	հատ	1	4.30	4.30
44	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN250, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	3	20.90	62.70
45	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN200, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	1	15.44	15.44
46	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN150, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	2	9.97	19.94

47	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN100, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	3	7.62	22.86
48	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN80, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	13	6.57	85.41
49	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN65, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	4	5.26	21.04
50	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN50, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	5	4.30	21.50
51	Պողպատե կցաշուրթերի մոնտաժում DN40, PN=1,0ՄՊա նախատեսված պոլիէթիլենե խողովակների համար	հատ	4	4.30	17.20
52	Պոլիէթիլենե (HDPE) DN250 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.3	345.53	103.66
53	Պոլիէթիլենե (HDPE) DN225 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.1	142.79	14.28
54	Պոլիէթիլենե (HDPE) DN160 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.2	128.30	25.66
55	Պոլիէթիլենե (HDPE) DN110 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.3	63.61	19.08
56	Պոլիէթիլենե (HDPE) DN90 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	1.3	48.17	62.62
57	Պոլիէթիլենե (HDPE) DN75 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.4	35.62	14.25
58	Պոլիէթիլենե (HDPE) DN63 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.5	25.00	12.50
59	Պոլիէթիլենե (HDPE) DN50 միջադիրի մոնտաժում, PN=1,0ՄՊա	10հատ	0.4	25.00	10.00
60	Պոլիէթիլենե (HDPE) խողովակների ձևավոր մասեր DN50xDN250	10հատ	5.3	413.11	2,189.48
61	Էլ. հոսանքի միջոցով ներքին հալեցմամբ պոլիէթիլենե DN160 (HDPE) կցորդիչների մոնտաժում	10հատ	0.2	158.23	31.65
62	Էլ. հոսանքի միջոցով ներքին հալեցմամբ պոլիէթիլենե DN110 (HDPE) կցորդիչների մոնտաժում	10հատ	0.2	85.24	17.05
63	Էլ. հոսանքի միջոցով ներքին հալեցմամբ պոլիէթիլենե DN90 (HDPE) կցորդիչների մոնտաժում	10հատ	0.5	66.70	33.35
64	Էլ. հոսանքի միջոցով ներքին հալեցմամբ պոլիէթիլենե DN63 (HDPE) կցորդիչների մոնտաժում	10հատ	0.4	43.53	17.41
65	Էլ. հոսանքի միջոցով ներքին հալեցմամբ պոլիէթիլենե DN50 (HDPE) կցորդիչների մոնտաժում	10հատ	0.1	43.53	4.35

